

Վ. Դավթյանը Քաջարանում մասնակցել է <<Ամառային բակային ճամբար- 2015-ի>> երկրորդ հերթափոխի բացման արարողությանը

22.07.2015թ.

Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը հուլիսի 22-ին մասնակցել է Քաջարանում գործող <<Ամառային բակային ճամբար-2015-ի>> երկրորդ հերթափոխի բացման արարողությանը:

Ողջունելով ճամբարականներին՝ Վ. Դավթյանը շնորհավորել է երեխաներին, նրանց ծնողներին ու մանկավարժներին, իր խոսքում կարևորել ամառային հանգստի պատշաճ անցկացումը, մասնավորապես, երեխաների հանգիստը բովանդակալից ու գեղեցիկ կազմակերպելուն, այն առավել արդյունավետ դարձնելուն միտված համայնքային բոլոր նախաձեռնությունները:

Արդեն 4 տարի քաղաքում գործող բակային ճամբարներում այս տարի նույնպես իրենց ամառային հանգիստն անցկացնելու հնարավորություն ունեցան մոտ 1100 երեխա: Ճամբարի առաջին հերթափոխը մեկնարկել է հուլիսի 14-ին քաղաքի թիվ 1 և թիվ 2 դպրոցներում, որոնք ապահովված են ամառային ակտիվ հանգստի համար անհրաժեշտ ամեն ինչով:

Ճամբարում երեխաները կրում են միատեսակ եռագույն վերնաշապիկներ, գլխարկներ, վզկապներ, իսկ օրվա ընթացքում, բացի հետաքրքիր ու զվարճալի միջոցառումներից ու էքսկուրսիաներից , օրական 2 անգամ տրվում է նաև սնունդ: 4 տարվա պատմություն ունեցող բակային ճամբարները նպատակ ունեն հետաքրքիր դարձնել դպրոցահասակ երեխաների առօրյան: Ամառային բակային ճամբարը կգործի 3 հերթափոխով՝ յուրաքանչյուրը՝ 9 օրով:

Տարեցտարի ավելանում է ճամբար այցելող երեխաների թիվը: Քաջարանի բակային ճամբարը առաջին հերթափոխին հավաքել էր 275 երեխա, երկրորդին՝ 320, երրորդին՝ 350: Ինչպես առաջին բակային ճամբարում, այնպես էլ այստեղ ընդգրկվել են 6-14 տարեկան երեխաներ:

Պատասխանատուների հավաստմամբ՝ ճամբարականների առօրյան այստեղ անցնում է խիստ կանոնակարգով՝ կազմակերպել ներկայացումներ, կինոդիտումներ,

հայտարարել հումորի օր, անցկացնել երգի և ինտելեկտուալ խաղերի մրցույթներ, սովորեցնել պար թեմադրել և այլն

